վարուքթեամբ ըստ շաւղաց ազգաց արեւմտեայց և առաջնորդեալք ի լոյս ընդ Հովանեաւ Մայր Աթոռոյս՝ Մօրն իւրեանց և Եկեղեցւոյս Մերոյ Առաքելականի։

Ողջ լերուք, զօրացեալ ի շնորհս և յօգնականութիւն Տեառն և օրհնեալք ի Մէնջ յաւէտ. Ամէն.

ԳԷՈՐԳ Ե.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 10/23 ապրիլի 1916 ամի
Ըստ Տոմարիս ՌՅԿԵ
ի Հայրապետութեան Մերում Ե. ամի
յԱրարատեան Մայր Աթոռս ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ
Թ. 914

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Մինոգին Ամերիկայի Բուէնոս-Այրէսի «Հայ Կանանց Որբախնամ Ընկերութեան» յօգուտ հայ որբերի փոխադրած երեք հարիւր (300) ռուբլին։ 2 յունուարի։ Թ. 3։

Կոնդակ օրհնութեան Եգիպտոսի Առաջնորդի։ Որբախնամ և Կարմիր-Խաչի Ընկերութիւնների անունով հայ փախստականի որբերի ի մի ժողովելու և նոցա պահպանելու համար։ 2 յունուարի։ Թ. 4։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Մինոգին Օտտաւրոպոլի Հայոց Կոմիտէի փոխադրած յօգուտ Կարնոյ գաղթականների մի հազար (1000) ռուբլին։ որ պիտի ուղարկուի Զաւէն վարդապետին։ 3 յուն.։ Թ. 5։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Մինոգին Ղարարագի Հ. Կոնսիստորիայի կողմից փոթորկից

Փաստուածների օգտին փոխադրած երկու հարիւր եօթանասուն չորս ռուբ. 27 կոպ. (274 ռ. 27 կ.)։ 7 յունուարի, Թ. 6։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինօդին Աքքերմանի Տ. Երեմիա քահանայ Սպրիլեանի յօգուտ գաղթականների փոխադրած երեք հարիւր (300) ռուբլին։ 9 յունուարի։ Թ. 21։

Կոնդակ Վրաստանի Հայոց Թեմի Առաջնորդ. Տ. Մխիթար եպիսկոպոսի անունով, որով արտօնուեց բանալ Ղազախի գաւառի Բեաղլի գիւղում Հայոց եկեղեցական-ծխական դպրոց։ 9 յունուարի, Թ. 22։

Կոնդակ Տփխիսի Հայոց Ազգագրական Ընկերութեան անունով, որով ընկերութեան ջանքերով բացուող հասակաւոր ուսանողների դասընթացները Նորին Սրբութիւնն ընդունեց իւր բարձր հովանաւորութեան ներքոյ, համաձայն Ընկերութեան խնդրի։ 9 յուն., Թ. 24։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնելով Սինօդին Ամերիկայից ստացուած երեք հարիւր քսան և մի ռուբ. (321 ռ.), պատուիրուեց մուծել մուտից մատեան, որպէս օտարապատկան գումար, և երբ Փոխան Նախոյեանը երևան գայ՝ Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի միջոցով յանձնել նորան։ 10 յուն., Թ. 35։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինօդին I հայկական հրացանաձիգ գնդի հայ սպաների փոխադրած երեք հարիւր եօթանասուն (370) ռուբլին։ 11 յունուարի, Թ. 38։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինօդին Մայր Աթոռի Ճեմարանի Վարչութեան Պետրոգրադի Հայոց եկեղեցական Խորհրդից ստացած քսան և եօթ հազար (27000) ռուբլին մուտք և ելք գրել ի հաշիւ Ճեմարանի 1916/17 ուսումնական տարուայ ծախքերի։ 11 յունուարի, Թ. 40։

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Մայր Տաճարի Լուսարարապետին Վանից ուղարկած եկեղեցական գրքերն ու զգեստները՝ Մայր Տաճարում պահելու համար։ 11 յունուարի, թ. 41։

Կոնդակ օրհնութեան Նոր-Նախիջեւանցի Քերովբէ և Աննա Պոպովեանների անունով՝ իրենց ծախքով Նոր-Նախիջեւանում երկյարկանի տուն կառուցանելու և Եկեղեցական Հոգաբարձութեան յանձնելու առթիւ։ 12 յունուարի, թ. 45։

Դիւանի գրութիւն Տաթեւի Հոգևոր Կառավարութեան անունով, որով, Նորին Սրբութեան հրամանի համաձայն, յանձնարարուեց շարունակել կանոնաւորապէս ուղարկել Տ. Տ. Նիկողայոս և Ստեփան վարդապետների որոշած ռոճիկները, ի նկատի ունենալով, որ նոքա Տաթեւի միաբաններ են համարւում, հետևաբար և այդ վանքի արդիւնքներից էլ պիտի ստանան իրենց ռոճկադրամները։ 12 յունուարի, թ. 49։

Կոնդակ օրհնութեան Միրզաջան Միրզաբէկեանի, Տիկին Թագուհի Միրզաբէկեանի և Տիկ. Խանում Տէր-Յովհաննիսեանի անունով՝ Շամախու Հայոց Թեմական դպրոցին կտակած մի հարիւր հազար (100,000) ռուբլին Թեմի Առաջնորդին յանձնելու առթիւ։ 13 յուն., թ. 57։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին ս. Խաչ քաղաքի Նիկողայոս քահանայ Ճուղուրեանի յօգուտ գաղթականների փոխադրած մի հազար (1000) ռուբլին։ 13 յունուարի, թ. 59։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Մ. Տաճարի Լուսարարապետին տալ Ալաշկերտի Մանկասար գիւղի եկեղեցուն մի ձեռք պատարագի զգեստ։ 13 յունուարի, թ. 60։

Դիւանի գրութիւն Վետրոս Կուզնեցեանի անունով, որով յանձնարարուեց ուղարկել Մայր Աթոռի Ճեմարանի Վարչութեան որդու 1914/15 և 1916/17 ուսում. տարի-

ների ապառիկ թոշակը՝ երկու հարիւր (200) ռուբլի։ 14 յունուարի, թ. 64։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Բրազիլիայում ապրող հայերի անունով՝ հայ գաղթականների օգտին մի քանի անգամ գումարներ ուղարկելու առթիւ։ 14 յունուարի, թ. 65։

Դիւանի գրութիւն Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անունով, որով, Նորին Սրբութեան կարգադրութեան համաձայն, յանձնարարուեց փոխադրել Կարին յանուն Տ. Զաւէն վարդապետի մի հազար (1000) ռուբլի, որպէս զի հոգայ այնտեղի հայ գաղթականների կարիքները։ 14 յունուարի, թ. 66։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Նոր-Նախիջեւանից Տ. Գէորգ վարդապետի միջոցով Ստեփան Զոլոտարեանի փոխադրած յօգուտ հայ գերիների փրկութեան երեսուն և վեց (36) ռուբլի։ 16 յուն., թ. 78։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Շամախու թեմի Սալեանի Մկրտիչ քահ. Մայիլեանի փոխադրած յօգուտ գաղթական որբերի երեք հարիւր (300) ռուբլին, որ հանգանակուած է Պետրոպաւլովսկի հայ գաղութի կողմից։ 18 յունուարի, թ. 95։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Պեատիգորսկի Տ. Աբրահամ քահանայ Շխինեանի յօգուտ գաղթականների և գաղթականական դպրոցների փոխադրած երկու հարիւր յիսուն (250) ռուբլին։ 18 յունուարի, թ. 96.

Նորին Սրբութեան մակագրութիւն Ս. Էջմիածնի Սինոդին 1916 թ. սեպտեմբեր 15-ի թ. 1499 յայտարարութեան վրայ. «Հրահանգում ենք Սինոդին պսակուողների տարիքների տարբերութիւնն ի նկատի ունենալ մինչև 15 տարի և այս մասին հրահանգել Թեմական Առաջնորդներին, սակայն վերապահութեամբ, որ աւելի տարբերու-

թեան և կամ այդ շրջանում եղած տարակարծների նկատմամբ Առաջնորդներն ամեն անգամ դիմեն Մինոզիդ վերջնական որոշման և արտօնութեան։ 18 յունուարի։ թ. 100։

Նորին Օրրութեան մակագրութեամբ յանձնուեց Մինոզին հետեւեալ գումարները՝

ա) Լոնդոնից Վոլժսկո-Կամսկի առեւտրական բանկի միջոցով փոխադրած յօգուտ գաղթականների տասն և հինգ հազար հինգ հարիւր (15,500) ռուբլի։ 19 յուն.։ թ. 106։

բ) Միմֆերոպոլի հայ Կանանց Ցանձնաժողովի փոխադրած յօգուտ գաղթականների սերմացուի մի հարիւր յիսուն և վեց ռուբ. 90 կ. (156 ռ. 90 կ)։ 19 յունուարի։ թ. 107։

գ) Եգիպտոսի Զակազիկ քաղաքի Կարմիր Խաչի Ընկերութեան փոխադրած յօգուտ գաղթականների մի հազար երկու հարիւր (1200) ռուբլին։ 19 յուն.։ թ. 108։

դ) Ամերիկայից Նիւ-Եորքի Հայ ազատագրութեան Նպաստիչ Ցանձնաժողովի փոխադրած յօգուտ գաղթականների երեք հազար ութ հարիւր եօթն ռուբ. 19 կոպ. (3807 ռ. 19 կ.)։ 19 յունուարի։ թ. 109։

ե) Ամերիկայից Ռիչմոնդ քաղաքի Օժանդակ Մարմնի փոխադրած յօգուտ գաղթականների մի հարիւր ինսուն երկու ռուբ. 30 կ. (192 ռ. 30 կ)։ 19 յունուարի։ թ. 110։

զ) «Արարատ» ամսագրի խմբագիր Տ. Գիւտ աբեղայից, ստացուած Իտալիայի Տուրին քաղաքի Երգնկացիներից, յօգուտ Երգնկայի գաղթականների՝ երկու հարիւր (200) ռուբլի։ 19 յունուարի։ թ. 111։

է) Պարսկա-Հնդկաստանի Հայոց Առաջնորդական Խորհրդարանի ուղարկած (ստացած Դր. Դօնալտ Կարլից) յօգուտ Վանայ գաղթականների մի հարիւր վաթսուն ռ. 50 կ. (160 ռ. 50 կ.), № 304559 բանկային փոխանակագիրը։ 19 յունուարի։ թ. 112։

Գիւանի գրութիւն Ս. Էջմիածնի Եղբայրական Օգ-

նութեան Ցանձնաժողովի անունով՝ որով՝ համաձայն Նորին Սրբութեան կարգադրութեան՝ յանձնարարուեց փոխադրել գազթականական գումարից հինգ հարիւր (500) ռուբլի Վան յանուն՝ Վարագայ վանքի անտեսութեան համար։ Արտահամ Միրաքեանի ձեռքով։ 19 յունուարի։ Թ. 121։

Նորին Սրբութեան մակագրութիւն Ներսէս վարդապետ Տէր-Միքայէլեանի Տփխիսից ուղարկած յունուար 18-ի խնդրի վրայ. «Ըստ խնդրոյ Ներսէս վարդապետի զբրգելով զնա ի կարգէ կուսակրօն քահանայութեան՝ յատուցանէ վարդապետական և ի միաբանութիւնէ Մայր Աթոռոյս՝ պատուիրեմք Օրնոդի Ս. Էջմիածնի ածել զայս Մեր վճիռ ի կատար՝ զասելով զնա ի շարս աշխարհականաց, տալով գիտել զայսմանէ պատշաճաւոր քաղաքական իշխանութեան և կարգադրել զոր ինչ պարտէ»։ 20 յուն.։ Թ. 131։

Կոնդակ Վրաստանի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Մխիթար եպիսկոպոսի անունով՝ որով արտօնուեց բանալ Ծուխումի շրջանի Եաշարա գիւղում՝ համաձայն ծխականների որոշման՝ եկեղեցական-ծխական դպրոց։ 21 յուն.։ Թ. 133։

Դիւանի գրութիւն Նոր-Նախիջևանի Հայոց Հոգևոր Կառավարութեան անունով՝ առաջադրուեց տանել պ. Վարդան Տէր-Մահակեանից (Պոպով) խոստացած հինգ հարիւր (500) ռուբլին՝ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի համար եկեղեցական զգեստներ և սպասներ գնելու համար և գրամը փոխադրել Ս. Էջմիածին։ 20 յուն.։ Թ. 135։

Դիւանի գրութիւն Ս. Էջմիածնի Եպիսկոպոսական Օգնականութեան Ցանձնաժողովի անունով՝ որով՝ համաձայն Նորին Սրբութեան կարգադրութեան՝ յանձնարարուեց՝ ա) վերցնել իւր հոգանաւորութեան տակ Տրապիզոնի և շրջակայքի որբերի խնամատարութեան հոգսը՝ բ) վերանորոգել տալ քառ առաջարկութեան Տ. Մեսրոպ աւագ քահ. Մելեանի՝ Տրապիզոնի Ս. Ստեփաննոս եկեղեցու բակում գտնուող եռայարկ շէնքը և Ռուսաց նախկին հիւպատոսարանը՝ որ

նոյնպէս ազգային սեպհականութիւն է, որ կարելի է յարմարաւոր որբանոցներ ունենալ։ գ) Պետական նպաստների գումարից աւելի ծախսուած գումարները՝ որբերի պահպանութեան վրայ։ ստանալ նոյն կարուածական եկամուտներից։ դ) քննութեան առնել ընդհանուր Կարգադիր Յանձնաժողովի նիստում Տ. Մեսրոպ աւագ քահանայ Մելեանի ոտճիկն աւելացնելու առաջարկը։ 23 յուն.։ թ. 138։

Դիւանի գրութիւն Հայ Հոգևորականութեան Տրապիզոնի Ներկայացուցիչ Տ. Մեսրոպ աւագ քահ. Մելեանի անունով։ որով յանձնարարուեց՝ ա) Դանձել Տրապիզոնի բոլոր եկեղեցական կալուածների եկամուտները և ամսեամիս հաշիւ (համառօտ) ներկայացնել Դիւանիս։ բ) Հոգատանել այժմեանից իսկ եկեղեցական կալուածները վարձով տալու մասին։ պայմաններ կապելով վարձակալների հետ։ ուղարկելով Դիւանին պայմանների պատճէնները։ գ) Իբրև հոգևոր ներկայացուցիչ թողնում է նրան բնակուել եկեղեցապատկան տան մէջ, առանձին բնակարանում։ առանց վարձի։ յառանձին տնօրինութիւն։ դ) Հոգալ նորոգել եկեղեցիների աւերած մասերը։ պարիսպների կործանածները և այլն։ նախապէս յարաբերութեան մէջ մտնելով Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի նախագահի հետ՝ կատարուելիք ծախքերի քանակի և աղբիւրի մասին։ 23 յունուարի։ թ. 139։

Դիւանի գրութիւն պ. Սարգիս Հախնազարեանի անունով։ որով խնդրուեց իւր քարուգագիրք հրատարակելու համար խոստացած 1000 ռուբլին փոխադրել Սինոդի անունով։ որպէսզի հնարաւոր լինի սկսել տպագրութիւնը։ 24 յունուարի։ թ. 148։

Երջաբերական Կոնդակներ Ռուսաստանի Հայոց թեմական Առաջնորդների անունով։ որով յայտնելով Մայր Աթոռի միտքն ներսէս վարդապետ Տէր Մկրտչեանի Վեհափառ Հայրապետի հրամանները և Սինոդի կարգադրութիւնները չկատարելը և զրժելով իւր խոստումն ու

միաբանական ուխտը՝ հրաժարուելց հոգևոր իշխանութիւնց, պատուիրուելց ուսուցչական պաշտօն չտալ նորան ոչ ծխական և ոչ էլ թեմական դպրանոցներում նաև կրօնական առարկաների դասեր չտալ պետական դպրոցներում ինքնատիպ ունենալով որ ուխտաղրուժ և խոստմնապանց անձը չի կարող կրթել մատաղ սերնդին։ 24 յունուարի։ թ. թ. 150—155։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Եգիպտոսի Հայոց առաջնորդարանի յօգուտ գաղթականների փոխադրած ինն հարիւր ինսուն երեք ռուբ. 95 կ. (993 ռ. 95 կ.)։ 25 յունուարի։ թ. 156։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին «Մշակի» խմբագրութիւնից ստացուած յօգուտ Սալմաստի և Ուրմիայի հայ և ասորի գաղթականների մի հազար չորս հարիւր եօթանասուն և ութ (1478) ռուբ։ 25 յունուարի։ թ. 157։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Լազարեանի «Вольноопредѣл.» գնդի հրամանատարի յօգուտ գաղթականների փոխադրած չորս հարիւր (400) ռուբ։ 25 յունուարի։ թ. 158։

Կանդակ օրհնութեան բարձրագոյն վանական վանահայրական Աւետիս Դարբինեան Արուսչանցի անունով իւր հանգուցեալ կնոջ յիշատակը յաւերժացնելու առթիւ Բարձր Հռիփսիմեանց դպրոցի և Ղաջար գիւղի ծխական դպրոցի օգտին քսան և հինգ հազար (25,000) ռուբլի նուիրելու համար։ 25 յունուարի։ թ. 159։

Դիւանի գրութիւն Ս. Էջմիածնի կենտրոնական Ուսումնարանական Յանձնաժողովի անունով, որով Նորին Սրբութեան կարգադրութեան համաձայն, յանձնարարուեց Պետական միջնակարգ դպրոցներում հայ կրօնական առարկաների ծրագիր կազմել և ներկայացնել Նորին Վեհափառութեան ի հաստատութիւն։ 25 յուն.։ թ. 162։

Կոնդակ Տ. Մեսրոպ աւագ քահանայ Մելեանի, պ. պ. Տիգրան Ազամալեանի, բժ. Յարութիւն Մարուքեանի, բժ. Մինր-Փայլակ Ազիզեանի և Տիկին Իւզարեր Շահպարոնեանի անունով, որոնք հաստատուեցին Տրապիզոնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անդամութեան մէջ։ 26 յունուարի թ. 169։

Կոնդակ օրհնութեան պ. Անուշաւան Յովհաննիսեան Ղազանջեանցի անունով՝ հանգուցեալ կնոջ յիշատակը յաւերժացնելու համար Թիֆլիզի Սարուրթալոյ արուարձանի հայոց ծխական դպրոցի պահպանութեան օգտին տան և հինգ հազար (15,000) ռուբլի նուիրելու առթիւ 26 յունուարի թ. 170.

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Բոստոնից Տ. Մուշեղ Արքեպիսկոպոսի միջոցով Արիսատակէսեանի գաղթականների օգտին փոխադրած հինգ հարիւր յիսուն և երեք ռուբ. 40 կ. (553 ռ. 40 կ.)։ 27 յունուարի թ. 172։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Մելիտոպոլի Վահան աւագ քահանայ Մամիկոնեանի փոխադրած մի հազար (1000) ռուբլին, որի կէսը յատկացուելու է Կարնոյ, իսկ միւս կէսը՝ ընդհանուր գաղթականների օգտին։ 27 յունուարի թ. 175։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Տաշքենտի Տ. Մարկոս քահ. Տէր Մկրտչեանի միջոցով Ադաջան Իսրայէլեանի փոխադրած յօգուտ գաղթականների մի հարիւր (100) ռուբլին։ 30 յուն., թ. 180։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Տփխիսի վաճառական Կարնեցի պ. Վէորգ Թորոսեանի Իլլէեանի անունով, որը իւր վաղամեռ հօր յիշատակը յաւերժացնելու համար նուիրել է՝

ա) Տփխիսի Կաթուղիկէ և Վէորգ եկեղեցիների ծխական դպրոցներին երեք հարիւրական ռուբլի, բ) Խարբերդից վերադարձած կարօտեալներին՝ 1500 ռուբ., գ) Թիֆ-

լիզի հայ քահանաների միջոցով վիրախօս վայրերում պահուող դպրոցներին՝ 500 ռ., գ) Թիֆլիզի Հայոց Բարեգործական Ընկերութեան՝ 500 ռ., ե) Աղէքսանդրապոլի Հայոց Բարեգործական Ընկերութեան՝ 300 ռ., զ) Հայ որբ-որդների Կոմիտէի որբանոցին՝ 200 ռ., է) Ռուսաց Կարմիր Խաչի Ընկերութեան՝ 200 ռ., ը) «Մեղու» Ընկերութեան՝ 200 ռ., թ) Թիֆլիզի հայ քահանաների ապահովութեան գանձարանի Վարչութեան՝ 200 ռ. և ժ) Մի քանի այլ բարեգործական նպատակներով յատկացրած 2750 ռ., ընդամէնը վեց հազար ինն հարիւր յիսուն (6950) ռուբլի՝ 30 յունուարի, թ. 193։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ախալցխայի Հայոց Հոգևոր Կառավարութեան փոխադրած յօգուտ գաղթականների տասն ռուբ. 03 կոպ. (10 ռ. 03 կ.)։ 31 յունուարի, թ. 195։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայից փոխադրած Թիֆլիզից պ. Մակալըմի ձեռքով յօգուտ գաղթականների չորս հազար հինգ հարիւր (4500) ռուբլի՝ 31 յունուարի, թ. 196։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Կոնդակ Շուշու Մեղրեցոց եկեղեցու Խորէն քահանայ Իսկանդարեանի անունով, որով, ըստ միջնորդութեան թեմի ժամանակաւոր Կառավարիչ Տ. Վահան Ծ. վարդապետի, շնորհուեցաւ ուսագ քահանայութեան պատիւ։ 12 յունուարի, թ. 56։

Կոնդակ Զանգեզուրի գաւառի Խնձորեսկ գիւղի Յարութիւն քահանայ Տէր Մարտիրոսեանի անունով, որով Երևանի փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսի միջնորդութեան համաձայն, շնորհուեցաւ քահանայական լանջախաչ կրելու իրաւունք։ 13 յունուարի, թ. 58։